

տանելու համար, կ'ուզեն մեր թագաւորութեան եւ դաւառներուն մէջ անցնելով Պարսկաստան երթալ եւ անկէ երկրին վաճառքները այս սահմանները բերել եւ անոնցմով առուտուր ընել, մեր Աժտերխան, Եարոսլաւ, Արքանկել, Մոսկուա քաղաքները եւ մեր կայսերանիստ Փէթրպուրկ քաղաքը անցնելով: Նոյնպէս մեր թագաւորութեանը դաւառներուն մէջ տեսակ տեսակ վաճառքներ ծախել՝ արժան եղած մաքսը հատուցանելով: Միայն թէ կը հրամայեմք, որ այն վաճառքներէն, որ իրենք եւ իրենց գործակալները Պարսկաստան եւ կամ պարսից մեր կայսրութեան մէջ մեր որեւիցէ քաղաքները, նաւահանգիստները, ինչ ճանապարհով ալ որ ուզեն, տանիլ կամ մեր թագաւորութեան դաւառներուն մէջ միայն ծախել, եւ կամ միայն անոնցմէ անցնելով այս սահմանները բերել ուզենան, մաքսի տուրքը անոնցմէ բոլորովին այն օրինովքն առնուի, որ պարսից տէրութեան հպատակ եղող ջուղայեցիք կը հատուցանեն, եւ այս բանիս համար ինքը մեղմէ խոնարհութեամբ արտօնութիւններ եւ հրամաններ խնդրեց: Անոր համար մենք սլ, մեր կայսրութեան եւ դաւառներուն մէջ վաճառականութիւնը ծաղկեցնելու համար, ոչ միայն ըստ ամենայնի իր խնդրոյն հաւանեցանք, հապա նաեւ այս մեր հրովարտակը եւ արտօնութիւնը անոր տալու հաճեցանք՝ հրամայելով վերոյիշեալ ձերակոյտին, կուսակալներուն եւ անոնց փոխանորդներուն, հրամանատարներուն, խորհրդականներուն եւ զինուորական եւ քաղաքացիական ոստիկաններուն եւ մաքսի պաշտօնեաններուն, որ երբ Պետրոս եւ Արքահամ եւ Ստեփան Ապրո մեր այս հրովարտակով վաճառականութիւն ընելու համար ճամբորդութիւն մը ընեն եւ կամ իրենց կողմէ վաճառքներով գործակալներ զրկելու ըլլան, ամէն տեղ ազատ եւ անարգել ըլլան թէ՛ ծովով եւ թէ՛ ցամաքով, որ ճամբով ու որ քաղաքէն որ ալ ուզելու ըլլան երթալ իրենց մարդիկներով ու կահ կարասիքով եւ թողուլ զիրենք, առանց ամենեւին զրկողութիւն եւ խափանում մը ընելու, այլ մանաւանդ իրենց խնդրին համեմատ ամէն օգնութիւն անոնց ընել: Բայց իրենց հետ գտնուած եւ կամ իրենց գործակալներուն հետ զրկուած վաճառքներէն կը հրամայեմք, որ մաքսապետները, քաղաքապետները եւ ուրիշ պաշտօնեանները այն կերպով առնեն տուրքը եւ պատուիրուած տեղը բերուած դրամը՝ մեր թագաւորական դանձը, որ բոլորովին նման ըլլայ պարսից հպատակ ջուղայեցի հայերէն առնուածներուն՝ իրենց հետ գրուած պայմաններուն համեմատ, առկէ դատ, մէկը չը համարձակի բան մը պահանջել թէ՛ իրենցմէ եւ թէ՛ իրենց գործակալներէն եւ անոնց վրայ տուրք ձգել եւ մեր հպատակներէն չըլլայ ոչ մէկը որ անոնց զպշի, այլ վախնայ մեր բարկութեան սաստիկութենէն եւ սաստկապահանջ տուգանքներէն:

«Եւ այսպէս մենք, մեծազօր ինքնակալ, մեր արքայական մեծութեամբը մարդասիրաբար կը հաճիմք եւ կը հաւանիմք, որ անոնք եւ իրենց գործակալները մեր աթոռանիստ Անթիք-Պետրպուրքի մէջ եւ ուրիշ վերը յիշատակած քաղաքներուն մէջ ազատաբար բնակին եւ վաճառեն ամէն տեսակ վաճառքներ, միայն թէ պատուիրանով արդիւրուած չըլլայ, եւ վաճառականութեան պատճառով մեր եւ ուրիշ տէրութեանց քաղաքները քալեն եւ իրենց վաճառքները տանին կամ զրկեն, ջուրով թէ ցամաքով, հատուցանելով, ինչպէս որ վերը ըսինք, պարտուպատշաճ եղած տուրքը պարսից հպատակ եղող հայոց տուած տուրքին պէս: Այլ եւ կը հրամայեմք, որ նոյն Պետրոս Ապրոյի եւ իր եղբարցն ու գործակալներուն ամենէն աւելի հովանաւորութիւն եւ օգնութիւն ըլլայ, որպէսզի իրենց ուրիշ հայկազեան եղբարքը տեսնելով այդ, ինչպէս նաեւ ուրիշ ազգէ վաճառական մարդիկ յորդորին նոյնպէս մեր եւ պարսից երկրին հետ առեւտուր ընելու: Այս բանին հաստատութեան համար մեր ձեռքովը ստորագրեցինք ու կայսերական կնիքով զրոյժելու հրամայեցինք եւ մեր այս հրովարտակը առջի սովորութեանը պէս զրի անցնել իրենց կամ իրենց գործակալներուն աւանդել տուինք այն քաղաքներուն եւ այն տեղերուն մէջ, ուր որ օրէնք է տուրք առնել: Եւ եթէ իրենցմէ կամ գործակալներէն մէկը, առանց այս հրովարտակիս ալ, այնպիսի վաճառականութեան համար մեր տէրու-

տանելու համար, կ'ուզեն մեր թագաւորութեան եւ դաւառներուն մէջ անցնելով Պարսկաստան երթալ եւ անկէ երկրին վաճառքները այս սահմանները բերել եւ անոնցմով առուտուր ընել, մեր Աժտերխան, Եարոսլաւ, Արքանկել, Մոսկուա քաղաքները եւ մեր կայսերանիստ Փէթրպուրկ քաղաքը անցնելով: Նոյնպէս մեր թագաւորութեանը դաւառներուն մէջ տեսակ տեսակ վաճառքներ ծախել՝ արժան եղած մաքսը հատուցանելով: Միայն թէ կը հրամայեմք, որ այն վաճառքներէն, որ իրենք եւ իրենց գործակալները Պարսկաստան եւ կամ պարսից մեր կայսրութեան մէջ մեր որեւիցէ քաղաքները, նաւահանգիստները, ինչ ճանապարհով ալ որ ուզեն, տանիլ կամ մեր թագաւորութեան դաւառներուն մէջ միայն ծախել, եւ կամ միայն անոնցմէ անցնելով այս սահմանները բերել ուզենան, մաքսի տուրքը անոնցմէ բոլորովին այն օրինովքն առնուի, որ պարսից տէրութեան հպատակ եղող ջուղայեցիք կը հատուցանեն, եւ այս բանիս համար ինքը մեղմէ խոնարհութեամբ արտօնութիւններ եւ հրամաններ խնդրեց: Անոր համար մենք սլ, մեր կայսրութեան եւ դաւառներուն մէջ վաճառականութիւնը ծաղկեցնելու համար, ոչ միայն ըստ ամենայնի իր խնդրոյն հաւանեցանք, հապա նաեւ այս մեր հրովարտակը եւ արտօնութիւնը անոր տալու հաճեցանք՝ հրամայելով վերոյիշեալ ձերակոյտին, կուսակալներուն եւ անոնց փոխանորդներուն, հրամանատարներուն, խորհրդականներուն եւ զինուորական եւ քաղաքացիական ոստիկաններուն եւ մաքսի պաշտօնեաններուն, որ երբ Պետրոս եւ Արքահամ եւ Ստեփան Ապրո մեր այս հրովարտակով վաճառականութիւն ընելու համար ճամբորդութիւն մը ընեն եւ կամ իրենց կողմէ վաճառքներով գործակալներ զրկելու ըլլան, ամէն տեղ ազատ եւ անարգել ըլլան թէ՛ ծովով եւ թէ՛ ցամաքով, որ ճամբով ու որ քաղաքէն որ ալ ուզելու ըլլան երթալ իրենց մարդիկներով ու կահ կարասիքով եւ թողուլ զիրենք, առանց ամենեւին զրկողութիւն եւ խափանում մը ընելու, այլ մանաւանդ իրենց խնդրին համեմատ ամէն օգնութիւն անոնց ընել: Բայց իրենց հետ գտնուած եւ կամ իրենց գործակալներուն հետ զրկուած վաճառքներէն կը հրամայեմք, որ մաքսապետները, քաղաքապետները եւ ուրիշ պաշտօնեանները այն կերպով առնեն տուրքը եւ պատուիրուած տեղը բերուած դրամը՝ մեր թագաւորական դանձը, որ բոլորովին նման ըլլայ պարսից հպատակ ջուղայեցի հայերէն առնուածներուն՝ իրենց հետ գրուած պայմաններուն համեմատ, առկէ դատ, մէկը չը համարձակի բան մը պահանջել թէ՛ իրենցմէ եւ թէ՛ իրենց գործակալներէն եւ անոնց վրայ տուրք ձգել եւ մեր հպատակներէն չըլլայ ոչ մէկը որ անոնց զպշի, այլ վախնայ մեր բարկութեան սաստիկութենէն եւ սաստկապահանջ տուգանքներէն: